UDC 37(09)(479.25) + 2-47(479.25)
DOI 10.46991/educ-21st-century.v6.i1.170

ԿՐՈՆԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Դ-Ի ՕՐՈՔ

Ղևոնդյան Մանե
ԵՊՀ, ասպիրանտ,
«Դասական դպրոց» կրթական հիմնադրամ,
Հայաստանի Հանրապետություն
manegevondyan@gmail.com
https://orcid.org/0000-0001-5420-463X

Ամփոփում

Ժամանակի ընթացքում փոփոխվել են ուսումնական ձեռնարկների չափանիշները: Եթե դասագիրք կազմելու սկզբնական ժամանակաշրջանում տպագրական խնդիրների պատճառով հեղինակներն ունեին սահմանափակումներ, ապա այսօր ձեռնարկ ստեղծողները լայն հնարավորություններ ունեն: Պարբերաբար ուսումնական ձեռնարկներ են ներմուծվել նոր հասկացություններ, փոփոխվել են տեքստի ընկալումը, ստուգող առաջադրանքների ձևաչափը, ավելացվել կամ պակասեցվել են տեքստերին ուղեկցող նկարները, հարափոփոխվել են դասագրքերի լեզուն, եզրույթաբանությունն ու մեթոդաբանությունը:

Ներկա օրերում մինչ դասագիրքը կհասնի հասցեատիրոջը, գնահատվում է դրա «հիգիենան»: Վերջինս որոշվում է մաթեմատիկական բանաձևերի միջոցով. թե որքանով են դասագրքի տեքստերը գիտական, դաստիարակչական, հասցեատիրոջ տարիքին համապատասխան, գունային և դիդակտիկ մի շարք պահանջների համապատասխան [11, 150]:

Հայկական դասագրքերի պատմության մեջ մեծ հետաքրքրություն են ներկայացնում կրոնական բովանդակություն ունեցող ուսումնական ձեռնարկները: Դրանցում ամփոփված տեքստերը, մեթոդաբանությունը, կառուցվածքը, դիդակտիկ մի շարք լուծումներ վկայում են մեզանում քրիստոնեական գրականության անբաժանելի մաս կազմող դասագրքերի ավանդույթ ունենալու մասին: Հայկական միջավայրում նման ձեռնարկները անցել են երկար ճանապարհ:

Քննվող ժամանակաշրջանում արևելահայ կրթական համակարգում առկա էին մի շարք խնդիրներ. դպրոցները չունեին ընդհանուր կանոնադրություններ, ուսումնական ծրագրեր, անորոշ էր դպրոցների տեսակների հարցը: Կրթության առանցքային հարցերից էր դպրոցներում ընդհանուր դասագրքեր ունենալը:

19-րդ դարի երկրորդ կեսին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ի կրթական քաղաքականությունն ուղղված էր վերոնշյալ խնդիրների լուծմանը: Հայրապետի առաջնորդությամբ սկսվում է քրիստոնեական միասնական դասագրքեր ստեղծելու գործընթաց:

Հոդվածում ներկայացրել ենք Ամենայն հայոց հայրապետ Գևորգ Դ-ի կրթական քաղաքականությունը, նրա ձեռնարկած քայլերը կրոնի դասագրքեր ստեղծելու ուղղությամբ: Առաջին անգամ անդրադարձ է կատարվում կրոնի՝ հայ կրթական միջավայրում քրիստոնեական հարուստ գրականության մաս կազմող ուսումնական դասագրքերի ավանդույթին, դրանցում ներկայացված տեքստերի մեթոդաբանական առանձնահատկություններին:

Ներկայումս նման դասագրքերի ուսումնասիրությունը հնարավորություն է ստեղծում հաղորդակցվելու հայկական կրթական միջավայրում ստեղծված քրիստոնեական դասագրքերի ավանդույթին, վերլուծելու ուսումնական դասագրքերի մեթոդաբանական առանձնահատկությունները, որպես ուղեցույց օգտագործելու ներկա օրերում այդօրինակ դասագրքեր ստեղծելու համար:

Ուսումնական դասագրքերի վերլուծությունը փաստում է, որ Ամենայն հայոց կաթողիկոսի առաջնորդությամբ ստեղծվել է կրոնի դասագրքերի համակարգման գործընթաց: Տարբեր հեղինակներ հանձն են առել դպրոցների համար ստեղծել քրիստոնեական դասագրքեր: Դասագրքերը

բաժանվում են երկու խմբի՝ ա. քրիստոնեական կրոնի սկզբունքներ ուսուցանող դասագրքեր, որոնք հրատարակվել են «Քրիստոնեական վարդապետություն» խորագրով, բ. Հին և Նոր կտակարանների բարոյախրատական պատմություններ ընդգրկող, ինչպես նաև այլ կրոնների պատմության վերաբերյալ դասագրքեր: Դասագրքեր կազմողները առաջնորդվել են շարադրանքի երկու սկզբունքով՝ կատեխետիկ (հարց ու պատասխան) և համառոտ տեքստեր: Կատեխետիկ մեթոդաբանությամբ գրվել են քրիստոնեական վարդապետության դասագրքերը, իսկ մյուսները՝ դասագրքեր համառոտ տեքստերի մեթոդաբանությամբ:

Բանալի բառեր: *Կրթական քաղաքականություն, քրիստոնեական դասագրքերի ավանդույթ, կատեխետիկ, համառոտ շարադրանք:*

Հիմնախնդիր: Վերլուծել 19-րդ դարի քրիստոնեական գրականության անբաժանելի մաս կազմող կրոնի միասնական դասագրքեր ստեղծելու նպատակները, դրանց կառուցվածքը, մեթոդաբանական առանձնահատկությունները:

Հետազոտության նպատակը: Ներկայացնել է Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ի կրթական քաղաքականությունը, նրա ձեռնարկած քայլերը կրոնի դասագրքեր ստեղծելու ուղղությամբ:

Գիտական նորույթը: Վերլուծել ենք Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ի կրթական քաղաքականության համատեքստում ձեռնարկած քայլերը քրիստոնեական ընդհանուր դասագրքեր ստեղծելու ուղղությամբ: Ուսումնասիրության շրջանակում առաջին անգամ ներկայացնում ենք կրոնի դասագրքերում տեքստերի մեթոդաբանական երկու ձև՝ կատեխետիկ և համառոտ շարադրանքներ, ինչպես նաև ուսումնասիրվող նյութի ներկայացման՝ համակենտրոնական, միասնական, առաջընթաց ու համանվագ եղանակները: Առաջին անգամ անդրադարձ է կատարվում նաև դասագրքերի տեքստերին կից ուսումնաօժանդակ նյութերին:

Հիմնախնդրի վերաբերյալ գրականության վերլուծություն: Մեզանում եղած կրոնի դասագրքերի խնդիրներին անդրադարձել են Վ. Երկանյանը, Մ. Սանթրոսյանը, Գ. Հ. Հարությունյանը, Ա. Ալպոյաճյանը, Լեոն, Ա. Երիցյանը: Դասագրքերի մասին բազմաբնույթ տեղեկություններ գտնում ենք նաև մանկավարժական և կրոնական մի շարք պարբերականներում՝ «Արարատ», «Մանկավարժանոց», «Դպրոց»: Մենք ուսումնասիրել ենք Աբել Մխիթարյանի, Գաբրիել Այվազյանի, Ստեփան քահանա Մանդինյանի, Մեսրոպ Փափազյանի, Սարգիս Գնունու հեղինակած դասագրքերը:

Հիմնական նյութի շարադրանք: 19-րդ դարի առաջին կեսին արևելահայ դպրոցը գտնվում էր անցումային փուլում: Կրթօջախները հանդես էին գալիս ամենաբազմազան անուններով՝ «մասնավոր», «եկեղեցական», «վանական», «հոգևոր», «ազգային», «ժողովրդական», «թեմական», «հոգևոր-թեմական», «ծխական», «եկեղեցական-ծխական» [3, էջ 16]: Վերոնշյալ անունները հստակ պատկերացում չէին տալիս դպրոցի կրթության բովանդակության, ուղղվածության մասին: Դպրոցական ընդհանուր համակարգի բացակայության պատճառով դպրոցների տեսուչներն առաջնորդվում էին սեփական նախաձեռնությամբ: Գաղափարապես ձևավորվում էր դպրոցի նոր մոդել, քննարկվում էին մի շարք կարևոր հարցեր. ինչպիսի՞ն պետք է լինի ազգային դպրոցը, ինչպիսի՞ կրթության բովանդակություն պետք է ունենա այն, ինչպիսի՞ն պետք է լինեն ուսումնական ծրագրերն ու դասագրքերը:

Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ի գահակալման տարիներին արևելահայ կրթական համակարգում տեղի են ունենում մի շարք արմատական փոփոխություններ: Լեզվաբան, գրականագետ Մանուկ Աբեղյանի բնորոշմամբ Գևորգ Դ կաթողիկոսը համոզված էր, որ ազգի ու եկեղեցու առաջադիմության էական պայմանը ուսումն է, և

հայոց եկեղեցու պատմության Ե դարը ընդունելով որպես ընդօրինակման արժանի չափանիշ՝ ցանկանում էր լինել «Պարագլուխ և նահապետ հայկական լուսավորության, երկրորդ Սահակ Պարթև, քաջալերող, պաշտպանող և ժողովող ուսման և գիտության» [1, էջ 78]: Հայոց հայրապետը անդրանիկ ընդհանրական կոնդակում պատրիարքներին ու եպիսկոպոսներին հանձնարարում է վարժատներ հաստատել մենաստաններում, գիշերօթիկ դպրոցներ բացել առաջնորդանիստ քաղաքներում, գյուղերում [1, էջ 79]:

Առանցքային հարցեր էին դպրոցների կառավարումը, վարչական ճիշտ լծակների օգտագործումը: Հոգևոր առաջնորդի հանձնարարությամբ կազմվում է դպրոցների վիճակագրություն: Ցուցակագրվում են դպրոցների աշխարհագրական տեղանքը, հիմնադրման տարեթիվը, աշակերտների և ուսուցիչների քանակը, նյութական միջոցները, առարկայացանկը: Ուշագրավ իրադարձություն էր 1867 թ. Էջմիածնում ուսումնական հանձնաժողով ձևավորելը, որի գործառույթները պետք է լինեին՝ ա) համակարգել կրթական օջախների տնտեսական, վարչական տարաբնույթ հարցերը, բ) կրթական օջախներին անհրաժեշտ պարագաներով ապահովելը, գ) ծխական, վանական, թեմական դպրոցների համար միասնական կանոնադրություններ մշակելը [1, 79]:

Հաջորդ արմատական փոփոխությունը միասնական կանոնադրությունների ստեղծումն էր. 1868-1869 թթ. հրապարակվում են ծխական, թեմական, վանական դպրոցների կանոնադրությունները, որոնցում համառոտ ներկայացված էին տվյալ դպրոցների նպատակները, խնդիրները, կառավարման խորհուրդը, առարկայացանկը, ուսուցիչների և աշակերտների պարտավորությունները:

Դպրոցները բաժանվում էին երեք խմբի՝ ծխական, թեմական, վանական: Առաջին երկու խմբի դպրոցներում սովորում էին աշխարհիկ ու հոգևորական ընտանիքների զավակներ: Այն աշակերտները, որոնք ցանկանում էին ստանալ հոգևոր աստիճան, կրթությունը շարունակում էին վանական դպրոցներում: Ուշադրության է արժանի այն, որ երկսեռ դպրոցներում կար տարբերակված առարկայացանկ: Կանոնադրությունում առանձնացվել էին առարկաներ, որոնք նախատեսված էին աղջիների համար, ինչպես ձեռագործությունը [9, էջ 3]:

Ամենայն հայոց հայրապետի հոգածության ներքո էր Էջմիածնի Ժառանգավորաց ճեմարանը: Լինելով ժամանակի լրջագույն կրթօջախը, ուր կրթություն էին ստացել անվանի գործիչներ, այն բարեկարգման կարիք ուներ. «... Դպրոցն իսկապէս դպրոցի անուն էր կրում: Ոչ կանոնաւոր ուտելիք ու հագնելիք, ոչ մտաւոր ու բարոյական սնունդ. օրական երկու երեք ժամ անկանոն դասաւանդութիւն՝ հայոց և ռուսաց լեզուի, եկեղեցական երգեցողութեան ու քրիստոնէական վարդապետութեան. ոչ մի հսկողութիւն աշակերտների վարքի և բարքի վրայ, որոնք թուով 20-30 հոգի, Ս. Էջմիածնի շրջակայքից ժողովուած, իրենց սանձարձակ անկարգութեան էին մատնուած» [1, 85]:

Գևորգ Դ-ի կարգադրությամբ ուսումնասիրվող առարկաների շարքում ավելացվում են Սրբազան պատմության, հայոց պատմության, աշխարհագրության, թվաբանության, ինչպես նաև ֆրանսերենի դասեր: Կազմվում է առանձին խումբ՝ ճեմարանի կառավարումը կազմակերպելու, ուսումնական հարցերը քննելու համար:

Կարևոր քայլ էր թեմական դպրոցների վերատեսուչների խորհրդի ստեղծումը [1, էջ 81]: Այս կառույցի նպատակն էր ընդլայնել և վերահսկել դպրոցներում կրթության գործը: Խորհրդի անդամները պետք է այցելություններ կատարեին դպրոցներ, տեղեկություններ հավաքագրեին առկա խնդիրների, ուսման գործընթացի վերաբերյալ:

Հայրապետի կրթական քաղաքականության առանցքային հարցերից էր կրոնի համընդհանուր դասագրքերի ստեղծումը: Քննվող ժամանակաշրջանում կրոնի դասա-

գրքերն ունեին մի շարք թերություններ՝ լեզվի խնդիր, ուսումնասիրվող նյութի և աշակերտների տարիքային առանձնահատկությունների անհամապատասխանություն, տարբեր հեղինակների կազմած գրքերում ուսումնասիրվող նյութը տարբեր կերպ էր ներկայացված և մեկնաբանված:

Դասագրքերի տարաբնույթ լինելու մասին Աբել Մխիթարյանը հայտնում է, որ որքան դասագրքերը միասնական լինեն, այնքան աշակերտները արագ կսովորեն նոր դասավանդվող առարկան: Դասագրքերի պակասության պատճառով դպրոցներում օգտագործում են տարբեր հեղինակների դասագրքեր, ինչի արդյունքում աշակերտների մի մասը տիրապետում է ուսումնասիրվող նյութի մի մասին, իսկ մյուսները՝ այլ մասին:

Կրոնի տարբեր դասագրքերի օգտագործման դեպքում շատ հաճախ ուսումնական նյութը տարբեր դպրոցներում տարբեր մակարդակներով է ներկայացվում. վարդապետությունը նույնն է, սակայն ուսումնական նյութը մի դասագրքում մի ձևով և չափով է ներկայացված, մյուսում՝ այլ կերպ [13, էջ Թ-Ժ]:

Ըստ Մեսրոպ Փափազյանի՝ հայկական դպրոցներում կրոնի դասերն անցկացվում են հին ձեռնարկներով, ինչպես, օրինակ, Նարեկ, Ժամագիրք, Հին և Նոր կտակարաններ: Թեպետ վերոնշյալները առանցքային նշանակություն ունեն կրոնական գրականության մեջ, սակայն հարմար չեն դպրոցներում դաս վարելու համար [16, էջ Բ]:

Լրջագույն խնդիր էր դասագրքերի լեզուն. մի ձեռնարկը գրաբար էր շարադրված, մեկ ուրիշը՝ աշխարհաբար: Շատ ժամանակ գրաբարն ու աշխարհաբարը զուգահեռ էին ներկայացվում [15, էջ1]:

Հաշվի առնելով վերոնշյալ խնդիրները՝ հոգևոր առաջնորդը նախաձեռնում է կրոնի ընդհանուր դասագրքեր հրատարակելու գործընթաց: Աշխարհիկ ու հոգևորական հեղինակները, իմանալով Ամենայն հայոց հայրապետի նախաձեռնության մասին, մշակում և առաջարկում են դասագրքերի նմուշներ:

Դասագրքերի ներածություններից տեղեկանում ենք, թե ում համար է նախատեսված տվյալ դասագիրքը, ինչ բովանդակություն, կառուցվածք և մեթոդաբանություն ունի, որոնք են դասագրքի նպատակները:

Համաձայն դպրոցական կանոնադրությունների՝ ծխական դպրոցում, որը աշակերտի առաջին կրթօջախն էր, սովորում են քրիստոնեական կրոնի գլխավոր սկզբունքները, Հին և նոր Կտակարանների ուսումնադաստիարակչական պատմությունները [6, էջ 71]: Թեմական դպրոցների առաջին տարվա ընթացքում ուսումնասիրում են Հին և Նոր կտակարանների պատմությունը (համառոտ), իսկ երկրորդ ուսումնական տարում՝ քրիստոնեական կրոնի գլխավոր սկզբունքները (համառոտ), երրորդ տարում՝ քրիստոնեական վարդապետությունը (ընդարձակ) [7, էջ 145]: Վանական դպրոցներում կրոնական առարկաներ դասավանդվում էին միայն առաջին ու երկրորդ ուսումնական տարիների ընթացքում: Առաջին տարում սովորում էին «Քրիստոնեական Վարդապետություն» (միջին մակարդակ), երկրորդ տարում՝ Հին եւ Նոր Կտակարանների պատմություն, «Քրիստոնեական Վարդապետություն» (ընդարձակ) [8, էջ 6]:

Վերոնշյալից կարող ենք պատկերացում կազմել, որ աշակերտները կրոնական կրթություն ստանում էին բոլոր դպրոցներում պարզից բարդ սկզբունքով: Կրոնական կրթությունը սկսվում էր քրիստոնեական կրոնի տարրական գիտելիքների հաղորդմամբ, Հին և Նոր կտակարանների բարոյախրատական պատմությունների ուսուցմամբ: Հետագայում ուսումնասիրվող նյութի ծավալը ավելանում էր նոր մեկնաբանություններով:

Այն մասին, թե յուրաքանչյուր ուսումնական տարում կրոնի դասագրքերում ուսումնասիրվող նյութը ինչ մեթոդաբանությամբ ներկայացնել, անդրադարձել են ժամանակի նշանավոր մանկավարժներ, նրանց թվում՝ Իսահակ Հարությունյանը, Խորեն Նարպեն, Առաքել Բահաթրյանը: Հայտնի են ա) առաջընթաց և համանվագ, բ) միասնական, գ) համակենտրոնական տարբերակները:

Առաջընթաց եղանակի համաձայն՝ սկզբում ուսումնասիրում էին Հին կտակարանի ուսումնադաստիարակչական պատմությունները, ապա՝ Նոր կտակարանը, վերջին ուսումնական տարում՝ քրիստոնեական վարդապետություն:

Համանվագ եղանակի նպատակն էր կրոնի բոլոր բաժինները ուսումնասիրել միաժամանակ, այսինքն՝ զուգահեռ սովորում են քրիստոնեության պատմություն, վարդապետություն, բարոյագիտություն, Հին և Նոր կտակարանների ուսումնադաստիարակչական պատմություններ: Այս եղանակը մեզանում գործածական չի եղել [4, 205]:

Միասնական մեթոդաբանությամբ ստեղծված ձեռնարկներում կրոնական բոլոր փաստերը փոխկապակցված են միմյանց և ի հայտ են գալիս որպես մեկը մյուսի հետևանք, օրինակ՝ Ավետման պատմությունն ուսումնասիրելիս անդրադարձ է կատարվում Աստվածամոր աղոթքին, կամ Հիսուս Քրիստոսի կյանքը քննելու ընթացքում ներկայացվում է Սուրբ Պատարագի խորհուրդը [4, էջ 645]:

Համակենտրոնական եղանակի նպատակը քննվող առարկան իր ամբողջության մեջ ներկայացնելն է: Ամեն ուսումնական տարի ուսումնասիրվող նյութը կրկնվում է, սակայն ավելի ընդարձակ բովանդակությամբ ու մեկնաբանությամբ: Եթե առաջին տարվա ընթացքում սովորել են տասնաբանյա պատվիրանները ուղիղ իմաստով, օրինակ՝ «մի՛ սպանիր» նշանակում է՝ մի՛ խլիր ուրիշի կյանքը: Երկրորդ տարում սովորում են, որ «մի՛ սպանիր» նշանակում է՝ եթե ատում ես եղբորդ, արդեն մարդասպան ես [5, էջ 249]:

Դասագրքերի ուսումնասիրությունը փաստում է, որ հեղինակները կիրառել են համակենտրոնական եղանակը:

Դասագրքերում կրոնական բովանդակությունը ներկայացված է երկու ձևով՝ ա. *կատեխետիկ* (հարց եւ պատասխան), բ. *համառոտ տեքստեր*: Կատեխետիկ մեթոդաբանությունը հայտնի է նախաքրիստոնեական ժամանակաշրջանից: Շատ հեղինակներ (Սոկրատը, Պլատոնը, Արիստոտելը, Վանական Վարդապետը, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Մխիթար Սեբաստացին և այլք) դիմել են այս ձևին:

«Կատեխիս» բառը ծագում է հունարեն «գադիխիս» բառից: Նշանակում է *քրիստոնեական դավանանքի համառոտ շարադրանք՝ հարց ու պատասխան ձևով* կամ *որևէ գիտության հիմնական սկզբունքների շարադրանք*: Քրիստոնեության տարածման սկզբնական շրջանում հեթանոսներին հարց ու պատասխանի եղանակով ուսուցանում էին քրիստոնեության պատմության, հավատի մասին գիտելիքներ: Նման ուսուցումը երկար ժամանակ ծառայել է որպես քրիստոնեական հավատքի գլխավոր սկզբունքները մարդկանց հաղորդելու լավագույն միջոց:

Կատեխետիկ ոճով գրված կրոնական ձեռնարկներում գրքի ու ընթերցողի միջև անմիջական կապ է ստեղծվում: Այս մասին գրում է Մխիթար Սեբաստացին քրիստոնեականներից մեկում: Աբբահայրը նշում է, որ դասագիրքը, որը ներկայանում է որպես «զրուցակից», հարցեր է տալիս սովորողին և ստանում համարժեք պատասխաններ, ինչպես, օրինակ՝ հարց. «Լաւ, հիմիկ իմացայ որ դու զքո հաւատոյ պինտ հարկաւոր բաներն գիտես, զհայր և զորդի և զսուրբ ոգին երեք անձինք և մի Աստուած կու հաւատաս ... բայց կու կամիմ որ ասես ինձ թէ ինչո՞ւ համար քրիստոնէից նշանն սուրբ խաչն

է, և վասն է՞ր երկրպագութիւն կու լինի սուրբ խաչին»: Պատասխան. «Նորա համար, որ Քրիստոս Տէր մեր ի վերայ խաչին բևեռեցաւ, չարչարեցաւ և մեռաւ վասն ազատելոյ զմեզ և ասով խաչն եղև նշան Քրիստոսի, և ամենայն քրիստոնէից. և մեք քրիստոնեայքս որքան որ կերկրպագեմք սուրբ խաչին, նոյն երկրպագութիւն Քրիստոսի խաչեցելոյն կու լինի ...» [12, էջ 13-14]:

Քննվող դասագրքերից կատեխետիկ սկզբունքով են գրվել քրիստոնեական հավատի գլխավոր սկզբունքներ բովանդակող ձեռնարկները՝ Աբել Մխիթարյանի, Գաբրիել Այվազյանի, Սարգիս Գնունու հեղինակությամբ: Այս ձեռնարկներում բովանդակությունը վերաբերում է Սուրբ երրորդությանը, աստվածային ու մարդկային բնություններին, հավատո հանգանակին, տերունական աղոթքին, տասնաբանյա պատվիրաններին, առաքինություններին ու մեղքերին, եկեղեցական խորհուրդներին, Հին ու Նոր կտակարանների ուսումնադաստիարակչական պատմություններին:

Ձեռնարկների սկզբում հեղինակներն անդրադարձել են այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ «Ո՞վ է Մարդը», «Ո՞րն է նրա նպատակը», «Աստված ի՞նչ է», «Ի՞նչ է քրիստոնեական հավատը», «Ո՞րն է քրիստոնյաների Սուրբ գիրքը, քանի՞ մասից է բաղկացած», «Միայն մե՞կ Աստված կա», «Որո՞նք են Հոր, Որդու եւ Սուրբ հոգու տարբերությունները», «Արարածների մեջ կատարյալը ո՞վ է», «Քանի՞ օրում է ստեղծվել աշխարհը» և այլն: Հաջորդ բաժնում ներկայացված են արարչագործությունն ու դրան հաջորդող իրադարձությունները՝ «Ինչպե՞ս է ստեղծվել մարդը», «Ինչպե՞ս են մեղանչել Ադամն ու Եվան», «Ի՞նչ պատիժ են ստացել», «Ինչո՞ւ տեղի ունեցավ ջրհեղեղ» եւ այլն:

Երրորդ բաժինը նվիրված է հավատո հանգանակին: Հարց. «Այլ եւ այլ Եկեղեցեաց մեջ գործածուած հավատամքներու գլխավորներն որո՞նք են»: Պատասխան. «Այս չորսն են. Ա. Հանգանակ Առաքելոց, Բ. Հանգանակ Ժողովոյն Նիկիոյ, Գ. Հանգանակ Ժողովոյն Կոստանդնուպոլսի, Դ. Հանգանակ Հայաստանեայց Եկեղեցւոյ» [2, էջ 58]:

Դասագրքերում ուշադրության է արժանի մեկնությունների հարցը: *Հարց ու պատասխան* տարբերակը, շարադրանքի ձև հանդիսանալուց բացի, ներկայանում է մեկնության ձև նույնպես: Հանդես գալով որպես մեկնության եղանակ՝ հարց ու պատասխանը հեշտացնում էր ուսումնական նյութի ընկալումը [14, էջ139-140]: Մեկնությունների այս եղանակը փաստում է, որ սովորողը պետք է իմանար և՛ վարդապետությունը, և՛ ուսումնասիրվող նյութի իմաստը:

Ձեռնարկների մյուս գլուխներում ներկայացված են տերունական աղոթքը՝ բացատրություններով, ինչպես նաեւ՝ քրիստոնեական բարոյագիտությանն առնչվող հարցեր, այսպես. «Որո՞նք են առաքինությունները», «Ի՞նչ է քրիստոնեական խոհեմությունը», «Որո՞նք են բարոյական առաքինությունները», «Ընդդեմ հույսի մեղանչողները որո՞նք են»:

Ընդունված ավանդույթի համաձայն՝ քրիստոնեական վարդապետության ձեռնարկներում ներկայացված են սուրբգրային վկայություններ, նշանավոր եկեղեցական գործիչների երկերից մեջբերումներ, ինչպես. «Ո՞ւր կգտնեմք Քրիստոսական Հաւատոյ ճշմարտութիւնը», «Աստվածաշունչ սուրբ գրոց մէջ, որ է Հին եւ Նոր Կտակարանը»: Խոսքերի հեղինակը վկայությունների բաժնում մեջբերել է Հովհաննեսի ավետարանի համարժեք համարը. «Քննեցէք զգիրս ... նոքին իսկ են որք վկայեն վասն իմ» [13, էջ 21]:

Վկայությունների ներկայացման այլ օրինակ է, երբ ձեռնարկի վերջում զուգահեռ ներկայացվում են Հին ու Նոր կտակարանների վկայությունները, այն, ինչ նախագուշակվել էր Հին կտակարանում, իսկ Նոր կտակարանում կատարված եղելությունը: Հե-

դինակի կարծիքով սրա նպատակը քարոզչության եւ ուսուցչության գործը թեթեւացնելն էր [15, էջ 237]։

Երկրորդ սկզբունքը, որը հեղինակները կիրառել են կրոնական ձեռնարկներում, համառոտ կամ ընդարձակ տեքստերն են։ Այս ձևին դիմել են Մեսրոպ Փափազյանը, Ստեփանոս Մանդինյանը։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Մեսրոպ Փափազյանի հեղինակած «Մանկավարժ վերծանութեան» խորագրով ուսումնական դասագիրքը։ Այն նախատեսված է որպես ընթերցարան փոքր տարիքի աշակերտների համար։ Տեքստերը աշխարհիկ և կրոնական ուղղվածություն ունեն։ Գրքի սկզբում հեղինակը ներկայացրել է կրոնաբարոյական համառոտ պատմություններ, հաջորդիվ՝ թվաբանության, աշխարհագրության վերաբերյալ տեղեկություններ, ապա՝ Հին և Նոր կտակարանների բարոյախրատական պատմություններ, ազգային պատմություն։ Գրքի վերջին գլխում կցված են հայկական անձնանուններով հանելուկներ, ինչպես, օրինակ. «Արի եւ քաջ իւր հօր նման, և բարեսիրտ առաքինի, Եղբարքը թողուց ի Հարք գաւառ, ինքն յԱրարատ գայ բնակի» [16, էջ 183-184]։

Ուշադրության են արժանի դասագրքի կրոնաբարոյական տեքստերը, որոնք համապատասխանում են երեխայի տարիքային առանձնահատկություններին։ Տեքստերը գրված են առաջին դեմքով. «Ես հաւատով քրիստոնեայ եմ, կրօնքով՝ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ հարազատ զաւակ, իսկ ազգաւ՝ Հայ եմ և Հայկայ սերունդ։ Քրիստոնէական արտաքին նշանը՝ սուրբ խաչն է, իսկ ներքին նշանը՝ ընկերասիրութիւն. և կարող եմ խաչակնքել այսպէս յանուն Հօր և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ, ամէն» [16, էջ 1]։

Հեղինակն անդրադարձել ծնողներին, ուսուցիչներին, քահանաներին հարգելու, մեծարելու կարևորությանը. «Մեր ծնողներին, ուսուցիչներին, քահանաներին, երախտավորներին՝ պէտք է յարգութիւն տանք, և պատուենք. մեր ազգին էլ օգնենք՝ թէ խօսքով, և թէ՛ գործքով. և մեր անձը կրթենք գործքերով, և ամեն բանի մեջ չափավորութիւն ունենանք» [16, էջ 9-10]։

Հին կտակարանից ընդգրկված են արարչագործությունն ու դրան հաջորդող դեպքերը, ինչպես՝ մարդու արարում, մեղանչել, պատիժ, ջրհեղեղ, Աբրահամն ու նրա սերունդը, Մովսես, դատավորների պատմություն, Սողոմոն Իմաստուն, Նոր կտակարանից՝ Հովհաննես Մկրտչի գործունեությունը, Հիսուս Քրիստոսի ծնունդը, մոգերի երկրպագությունը, Հիսուս Քրիստոսի մկրտությունը, աշակերտների ընտրությունը, զանազան հրաշքներ, չարչարանքներ, եկեղեցական տոներ [10]։

Այն դասագրքերում, որոնցում ամփոփված են Հին եւ Նոր կտակարանների բարոյախրատական պատմությունները, հեղինակները դիմել են համառոտ կամ ընդարձակ տեքստերին։ Հեղինակները Սուրբ գրքից ընտրել են այնպիսի տեքստեր, որոնցում արտացոլված են քրիստոնեական կենցաղը, մարդ և Աստված հարաբերությունները, հավատքի դերն ու նշանակությունը, ինչպես նաեւ ծնող ու երեխա հարաբերություններ, տասնաբանյա պատվիրաններ, առաքինություններ ու մեղքեր։

Վերոնշյալ դրսևորումները ներկայացված են Հին կտակարանի՝ «Նախապատմական», «Նահապետների», «Դատավորների», «Թագավորների» դարաշրջանները բովանդակող տեքստերում, իսկ Նոր կտակարանում՝ Հիսուս Քրիստոսի կյանքն ու գործունեությունը։

Նման պատմությունների ուսումնասիրության շնորհիվ մարդը փոքր տարիքից սովորում է կառուցել իր հարաբերությունները, կազմակերպել իր կյանքը քրիստոնեական արժեհամակարգով:

Այսպիսով՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ի գլխավորությամբ կազմակերպվել է կրոնի ընդհանուր դասագրքեր մշակելու գործընթաց: Տարբեր հեղինակներ՝ աշխարհիկ, հոգևորական, կազմել են Քրիստոնեական վարդապետության, Հին ու Նոր կտակարանների, տարբեր կրոններին նվիրված դասագրքեր: Դասագրքերը գրվել են երկու ձևով՝ ա. կատեխետիկ, բ. համառոտ ու ընդարձակ տեքստեր: Կատեխետիկ ձևը բնորոշ է եղել քրիստոնեական վարդապետության վերաբերյալ դասագրքերին, իսկ տեքստերը՝ Հին ու Նոր կտակարանների բարոյախրատական պատմություններ պարունակող դասագրքերին: Կրոնի ուսումնական դասագրքերում ընդգրկվել են ինչպես կրոնական, այնպես էլ աշխարհիկ բնույթի տեքստեր: Դասագրքերի հասցեատերերը ազգային դպրոցի աշակերտներն ու ուսուցիչներն են: Ուսումնական դասագրքերի բովանդակությունը փաստում է այն մասին, որ նման դասագրքերի շնորհիվ աշակերտները ձեռք են բերում գիտելիքներ քրիստոնյայի կենցաղավարության, դավանանքի, եկեղեցական տոների, բարոյագիտության, Հին և Նոր կտակարանների վերաբերյալ:

Ներկա օրերում նման ուսումնական դասագրքերը կարող են ուղեցույց լինել նոր դասագրքեր ստեղծելու համար:

THE ISSUE OF UNIFIED RELIGION TEXTBOOKS DURING THE ERA OF CATHOLICOS OF ALL ARMENIANS GEVORG IV

Ghevondyan Mane
Yerevan State University, PhD student
“Classic school” educational foundation
Republic of Armenia
manegevondyan@gmail.com

Summary

Over time, textbook standards have changed. If in the early period of creating a textbook, the authors had limitations due to printing problems, today the creators of textbooks have wide opportunities. Periodically, new concepts were introduced into the textbooks, the format of tasks checking the understanding of the text was changed, the pictures accompanying the texts were added or reduced, the language, terminology, methodology, visual approaches of the textbooks were updated.

Nowadays, before a textbook reaches its recipient, its "hygiene" is assessed. The latter is determined by mathematical formulas: to what extent textbook texts are scientific, educational, appropriate for the age of the addressee, in accordance with a number of color and didactic requirements [11, 150].

Educational manuals with religious content are of great interest in the history of Armenian textbooks. The texts summarized in them, the methodology, the structure, a number of didactic solutions testify to the fact that we have a tradition of textbooks that are an integral part of Christian literature. Such undertakings have come a long way in the Armenian environment. During the period under review, there were a number of problems in the Eastern Armenian educational system: the schools did not have common charters, curricula, the issue of the types of schools was unclear. One of the key issues of education was having common textbooks in schools.

In the second half of the 19th century, the educational policy of Catholicos of All Armenians Gevorg IV was aimed at solving the above-mentioned problems. Under the guidance of the Catholicos, the process of creating unified Christian textbooks begins.

Here, we have presented the educational policy of Catholicos of All Armenians Gevorg IV, the steps he took in the direction of creating religious textbooks. For the first time, reference is made to the tradition of religious textbooks, which are part of the rich Christian literature in the Armenian educational environment, and the methodological features of the texts presented in them.

Currently, the study of such manuals creates an opportunity to communicate the tradition of Christian textbooks created in the Armenian educational environment, to analyze the methodological features of educational manuals, to use them as a guide for creating such textbooks in the present day.

The analysis of educational manuals proves that under the leadership of the Catholicos of All Armenians, a process of coordinating religion textbooks was created. Various authors have undertaken to create Christian manuals for schools. Textbooks are divided into two groups: a. manuals teaching the principles of the Christian religion, published under the title "Christian Doctrine", b. Textbooks presenting the moral stories of the Old and New Testaments, as well as the history of other religions. The authors of the manual were guided by two principles of the essay: catechetical (question and answer) and brief texts. Textbooks of Christian doctrine were written using the catechetical methodology, and other manuals were written using the methodology of brief texts.

Keywords**:** *Educational policy, Christian textbook tradition, Catholicos of All Armenians Gevork IV, catechetical, brief texts.*

ПРОБЛЕМА ЕДИНЫХ УЧЕБНИКОВ ПО РЕЛИГИИ ВО ВРЕМЯ ПРАВЛЕНИЯ КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН ГЕВОРГА IV

Гевондян Мане
Ереванский государственный университет, аспирант,
Образовательный фонд «Классическая школа»
Республика Армения
manegevondyan@gmail.com

Аннотация

Со временем стандарты учебников меняются. Если в ранний период разработки учебника авторы сталкивались с ограничениями из-за проблем с печатью, то сегодня перед создателями учебников открываются широкие возможности. Периодически в учебники вводились новые понятия, менялся формат заданий на проверку понимания текста, добавлялись или сокращались сопровождающие тексты картинки, обновлялся язык, терминология, методика, визуальные подходы учебников. В настоящее время, прежде чем учебник попадет к получателю, проводится оценка его «гигиеничности». Последнее определяется математическими формулами: насколько тексты учебников являются научными, учебными, соответствуют ли возрасту адресата, визуальными и дидактическими требованиями. [11, стр. 150]

В истории армянского учебника большой интерес представляют учебные пособия религиозного содержания. Обобщенные в них тексты, их методика, структура, ряд дидактических решений свидетельствуют о том, что мы имеем традицию учебников, являющихся неотъемлемой частью христианской литературы. Подобные начинания прошли долгий путь в армянской среде. В рассматриваемый нами период в образовательной системе Восточной Армении существовал ряд проблем: школы не имели общих уставов, учебных программ, остается нерешенным вопрос о типах школ. Одним из ключевых вопросов образования было наличие единых учебников в школах.

Во второй половине XIX в. просветительская политика Католикоса Всех Армян Геворга IV была направлена на решение вышеуказанных проблем. Под руководством Католикоса начинается процесс создания единых христианских учебников.

В данной статье мы представили образовательную политику Католикоса Всех Армян Геворга IV, шаги, которые он предпринял в направлении создания религиозных учебников. Впервые упоминается традиция создания религиозных учебников, являющихся частью богатой христианской литературы в армянской образовательной среде, и обозначены методологические особенности представленных в них текстов.

В настоящее время изучение подобных пособий дает возможность возобновить традицию христианских учебников в образовательной среде Армении, проанализировать методологические особенности учебных пособий того времени, использовать их в качестве руководства для создания рассматриваемого типа учебников в наши дни.

Анализ учебных пособий, изданных во второй половине XIX в., доказывает, что под руководством Католикоса Всех Армян проходил процесс согласования учебников по религии. Различные авторы взялись за создание пособий для христианских школ. Учебники делятся на две группы: а) пособия, обучающие принципам христианской религии, изданные под названием «Христианское учение», б) учебники, представляющие моральные истории Ветхого и Нового Заветов, а также истории образования других религий. Авторы пособия руководствовались двумя принципами архитектуры

учебника: катехизическим (вопрос-ответ) и кратким текстом. Учебники по христианскому учению писались по катехизической методике, а другие пособия – по методике кратких текстов.

***Ключевые слова*:** *образовательная политика, христианская традиция учебников, Католикос Всех Армян Геворг IV, катехизический, краткий текст.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբեղյան Մ., Գևորգ Դ Մեծագործ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Վաղարշապատ, Գ հրատարակություն, Վաղարշապատ, 2014:
2. Այվազեան Գաբրիել, Դասագիրք Քրիստոնեական վարդապետութեան ըստ ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1875:
3. Երկանյան Վ., Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, Երևան, 1970, էջ 16:
4. Խորեն Ստեփանե, Կրոնի դասատուութեան առաջընթաց եւ համանուագ եղանակներ, «Մանկավարժանոց», Թիֆլիս, 1889, N 3:
5. Խորեն Ստեփանե, Կրոնի դասատվության համակենտրոնական սիստեմ, Մանկավարժանոց, 1884, N 7-8:
6. Կանոն յաղագս ծխական հոգևոր դպրոցացն Հայոց ի Ռուսաստան, «Արարատ», 1868, N Զ:
7. Կանոնադրութիւնք յաղագս թեմական դպրոցաց Հայոց որ ի Ռուսաստան, «Արարատ», 1869, N Ժ:
8. Կանոնադրութիւն Վանական դպրոցաց, «Արարատ», 1869, N Ա:
9. Կանոնք Ծխական Դպրոցաց, Վաղարշապատ, 1876:
10. Մանդինյան Ստ., Սրբազան պատմութիւն Հին և Նոր Ուխտի, Վաղարշապատ, 1872:
11. Մանդինյան Ստ., Համառոտ պատմութիւն Նոր Ուխտի, Վաղարշապատ, 1870:
12. Մխիթար Սեբաստացի, Քրիստոնէական վարդապետութիւն, 1727:
13. Մխիթարեան Աբել, Դասագիրք Քրիստոնեական հաւատոյ, Վաղարշապատ, 1874:
14. Շիրինյան Մ. Է., Քրիստոնեական վարդապետության անտիկ եւ հելլենիստական տարրերը, Երևան, 2005:
15. Սարգիս Գնունի, Քրիստոնեական վարդապետութիւնն ըստ ուղղափառ դավանության Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցվոյ, Վաղարշապատ, 1879:
16. Փափազեան Մ., Մանկավարժ վերծանութեան, Վաղարշապատ, 1872:

Получено: 31.03.2024 *Received: 31.03.2024*
Рассмотрено: 08.04.2024 *Reviewed: 08.04.2024*
Принято: 26.04.2024 *Accepted: 26.04.2024*

© The Author(s) 2024
This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License